ազգային փոքրամասնութիւնները — գերմաններ, ռուսներ, հունգարացիներ, հրեաներ, բուլգարներ, հայեր, եւայլն, եւայլն: Կարելի էր յիշատակել ուրիշ երկիրներ եւս:

Ազգային փոքրամասնութեանց պայքարը այդ երկիրներում աւելի սուր կերպարանք առնում, աւելի ցաւատանջ դառնում ոչ միայն յիշուած պատճառներով, այլ եւ նրա համար, որ «ազգային փոքրամասնութեանց» շարքին են ընկել այսօր, պատերազմի հետեւանքով, այնպիսի ցեղագրական հատուածներ, որոնք ընդամէնը մի քանի տարի առաջ ոչ միայն ազգային մեծամասնութեանց, այլ եւ մեծ ազգութեանց անրաժան մաս էին կազմում: Այդպէս են, օրինակ, յատկապէս գերմանները Ռումանիայում, Հարաւ-Սլաւիայում, Իտալիայում, Չեխոսլովաքիայում, ինչպէս եւ մահառները՝ Ռումանիայում, Հարաւ-Սլաւիայում, եւայլն:

Հարկաւ անհանդուրժելի էր, որ, օրինակ, ռուս եւ գերման մեծ ազգերի անունով առաջ ճնշւում էին լեհերը եւ ռումանները. բայց առաւել եւս ցաւալի է, որ երբեմնի այդ անազատ ու միայն նոր ձերբազատուած, անկախացած ազգերի անունով են ճնշւում իրենց սահմաններում մնացած գերման եւ ռուս հատուածները:

Այս դրութիւնը, ինչպէս ասինք, չի կարող ժամանակի ընթացքում չվերանալ. չի կարող, վաղ թէ ուշ, ազգային-մշակութային ինքնավարութեան գաղափարը յաղթանակ չտանել բոլոր երկիրներում եւ առաջին հերթին՝ Եւրոպայում: Արդէն իսկ վերջին տարիներս Եւրոպայի ազգային փոքրամասնութիւնները հանդէս են բերել սեփական կազմակերպութիւններ: Նրանք ամէն տարի հրաւիրում են իրենց համագումարները Ժընէվում, Ազգաժողովի նիստերի նախօրեակին, վերջինիս առաջադրում են իրենց պահանջները: Հարկաւոր է, որ Եւրոպայից դուրս գտնուող ազգային փոքրամասնութիւնները եւս կազմակերպուին եւ կամ յարին Եւրոպականին:

Յատկանշական պէտք է համարել այս խնդրում — նկատենք անցողակի եւ անցնենք — երկու պարագայ: Մէկ այն, որ Ազգաժողովը հիմնող եւ նրան իսկապէս մարմնաւորող մեծ ազգերը — յատկապէս Ֆրանսա, Անգլիա եւ Իտալիա — իրենք իրենց սահմաններում չեն ճանաչում, ժխտելով ժխտում են առհասարակ ազգային փոքրամասնութեան գոյութիւնն եւ իրաւունքը: Ազգաժողովի կանոնադրութեամբ էլ՝ այդ իրաւունքը սահմանուած է միայն եւ միայն փոքր, նորակազմ եւ կամ ընդարձակուած պետութեանց համար: Ինչ որ անհրաժեշտ է, պարտադիր են համարում նրանք — թէեւ թղթի վրայ — փոքր պետութիւնների փոքրամասնութեանց համար, ժխտում են՝ իրենք իրենց համար: Սովորական նկարագիր բոլոր մեծերի:

Երկրորդ պարագան Ամերիկային է վերաբերում: Թէեւ վերջինս Ազգաժողովի անդամ չէ, բայց այդ պատճառն էլ չէ անպատճառ, որ նոր դարերի այդ ամենամեծ պետութիւնը, որ իրեն է վերապահում նաեւ «ամենազօրը», «ամենաժողովրդավարը» լինելու սուորոդելին, այդ երկիրը, որ գերազանցօրէն ազգային փոքրամասնութիւններից է բաղկացած, հանդիսանում է միեւնոյն ժամանակ ձուլման այն ամենաուժգին, բոցավառ հնոցը, ուր ամենից շուտ հալում են ամէն տեսակ փոքրամասնութիւններ: Ամերիկեան մշակոյթը եւ լեզուն կուլ են տալիս, որպէս կետ ձուկ, մնացած բոլորին: Միլիոններով գերմաններ, իրլանդացիներ, իտալացիներ եւ ուրիշ ազգութեանց պատկանող անհատներ են հալուել եւ հալւում ամերիկեան հնոցում: Սահմանուած «քօթան» արդէն իսկ ուրիշ հիմնական նպատակ չունի, քան՝ նախ եղածը կլլել լմնցնել: Իսկ ո՞ւր է ազգային փոքրամասնութեանց իրաւունքների պաշտպանութիւնը այդ «ամենադեմոկրատիկ երկրում»: Ո՞ւր են այդտեղ նրանց մշակութային հիմնարկները եւ կազմակերպութիւնները, որոնք պահուէին պետական միջոցներով. միջոցներ, որոնց կուտակման մէջ հաւասար բաժին ունին նաեւ այդ երկրի ամէն կարգի ազգութիւնները: Միջոցներ սակայն, որոնք չեն գործադրւում նրանց ինքնուրոյնութիւնը, ազգային դիմագիծը եւ մշակոյթը պահպանելու, այլ միայն եւ միայն՝ եղծանելու համար:

Ու տասնամեակներ, դարեր շարունակ՝ ճնշուած ու հալածական ժողովուրդները միամտօրէն աչքները յառած են պահել դէպի այդ